Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության
Առաջին Խորհրդական

Ընտանիքները կարող են հավերժ միասին լինել

Հավերժորեն ընտանիքները միավորելու քահանայության զորությունը Աստծո ամենամեծ պարգևներից մեկն է: Ամեն ոք, ով հասկանում է փրկության ծրագիրը, փափագում է ունենալ այդ հարատև օրհնությունը: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու նվիրագործված տաճարներում տեղի ունեցող կնքման արարողությունների ժամանակ է միայն, որ Աստված խոստում է տալիս, որ ընտանիքները կարող են հավերժ միասին լինել:

Քահանայության բանալիները, որոնք դա հնարավոր են դարձնում, վերականգնվել են երկրի վրա Եղիա մարգարեի կողմից՝ շնորհվելով Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին: Քահանայության այս բանալիները Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու մարգարեների միջոցով առանց ընդհատվելու փոխանցվել են մինչև ներկայիս օրերը:

Փրկիչն Իր մահկանացու կյանքի ծառայության ընթացքում խոսել է ընտանիքները կնքելու զորության մասին, երբ Պետրոսին՝ Իր ավագ Առաքյալին, ուղղել է այս խոսքերը. «Ճշմարիտ ասում եմ ձեզ, ինչ որ երկրի վերայ կապէք, երկնքումն էլ կապուած կլինի, եւ ինչ որ երկրի վերայ արձակէք երկնքումն էլ արձակուած կլինի» (Մատթեոս ԺԸ.18):

Միայն սելեստիալ արքայությունում է, որ մենք կարող ենք հավերժ ապրել ընտանիքներով: Այնտեղ մենք կարող ենք ընտանիքներով գտնվել Երկնային Հոր և Փրկչի ներկայության մեջ: Մարգարե Ջոզեֆ Սմիթն այսպես է նկարագրել այդ հրաշալի փորձառությունը Վարդապետություն և Ուխտերում.

«Երբ Փրկիչը հայտնվի, մենք կտեսնենք նրան, ինչպիսին որ կա: Մենք կտեսնենք, որ նա մեզ նման մարդ է:

Եվ միևնույն հարաբերությունները, որոնք այստեղ գոյություն ունեն մեր մեջ, այնտեղ ևս գոյություն կունենան մեր մեջ, միայն թե դրանք կզուգակցվեն հավերժական փառքով, փառք,
որը մենք այժմ չենք վայելում» (ՎԵՈՒ 130.1–2):

Այս սուրբ գրությունը ներշնչում է այն միտքը, որ մենք կարող ենք մեր ընտանեկան հարաբերություններում վստահաբար ձգտել երկնային չափանիշների: Մենք կարող ենք բավականաչափ մտահոգվել մեր ընտանիքի անդամների՝ ապրողների և մահացածների համար, անելու այն ամենը, որ կարող ենք, որպեսզի առաջարկենք նրանց քահանայության արարողությունները, որոնք կմիավորեն մեզ երկնքում:

Ձեզանից շատերը՝ երիտասարդ և մեծահասակ, անում են դա: Դուք փնտրել եք նախնիների անունները, ովքեր դեռևս չեն ստացել արարողությունները, որոնք կարող են կնքել ձեզ միասին:

Դուք գրեթե բոլորդ էլ ունեք ապրող բարեկամներ, ովքեր ընտանիքներով չեն կնքվել քահանայության զորությամբ: Շատերն ունեն ապրող բարեկամներ, ովքեր ստացել են քահանայության արարողությունները, սակայն չեն պահում ուխտերը, որոնք կապել

են Աստծո հետ: Աստված կօրհնի ձեզ, որ դուք կարողանաք օգնության հասնել այդ բոլոր բարեկամներին հավատքով: Դուք խոստում ունեք, որը Տերը տալիս է Իր աշակերտներին, ովքեր գնում են ուրիշներին Նրա մոտ բերելու.

«Եվ որտեղ որ ձեզ ընդունեն, այնտեղ կլինեմ նաև ես, քանզի ես կգնամ ձեր առջևից: Ես կլինեմ ձեր աջ կողմում և ձեր ձախ կողմում, և իմ Հոգին կլինի ձեր սրտերում, և իմ հրեշտակները՝ ձեր շուրջը, որ բարձրացնեն ձեզ» (ՎԵՈՒ 84.88):

Իմ գրասենյակի պատուհանից ես ամեն օր տեսնում եմ հարսնացուների և փեսացուների, ովքեր լուսանկարվում են գեղեցիկ ծաղիկների և խոխոջուն շատրվանների մոտ: Փեսացուն հաճախ տանում է իր հարսնացուին ձեռքերի վրա առնվազն մի քանի քայլ, մինչդեռ լուսանկարողը հարսանեկան նկարներ է նկարում: Ամեն անգամ նման տեսարանի հանդիպելիս ես մտածում եմ ինձ ծանոթ զույգերի մասին, ովքեր ժամանակին, երբեմն իրենց ամուսնության օրվանից շատ կարճ ժամանակ անց, տարել են միմյանց իրենց ձեռքերի վրա այլ առումներով, երբ կյանքը դժվարին է դարձել: Մենք կարող ենք կորցնել մեր աշխատանքը: Երեխաները կարող են ծնվել մեծ խնդիրներով: Հիվանդությունը կարող է անակնկալի բերել մեզ: Եվ ապա, ուրիշների հանդեպ այնպես վարվելու սովորությունը, ինչպես կցանկանայինք, որ մեզ հետ վարվեին, երբ դա ավելի հեշտ էր, մեզ կդարձնի հերոսներ և հերոսուհիներ այն փորձելու պահերին, երբ այն վերցնում է մեզանից ավելին, քան մենք կարծում էինք, թե ունենք մեր մեջ:

Մենք մեր ընտանիքներին պարտական ենք այնպիսի հարաբերություններ, որոնք մենք կարող ենք տանել Աստծո ներկայության մեջ: Մենք պետք է փորձենք չվիրավորել և չվիրավորվել: Մենք կարող ենք որոշել ներել արագ և ամբողջովին: Մենք կարող ենք փորձել փնտրել երջանկություն ավելի շատ ուրիշների, քան մեզ համար: Մենք կարող ենք լինել սիրալիր մեր խոսքում: Երբ մենք փորձենք անել այս բոլոր բաները, մենք կհրավիրենք Սուրբ Հոգին մեր ընտանիքներ և մեր կյանք:

Ես վստահեցնում եմ ձեզ, որ Տիրոջ օգնությամբ և ապաշխարող սրտերով մենք կարող ենք այս կյանքում տեսնել այնպիսի կյանքի նշույլներ, ինչպիսին կցանկանանք ունենալ հավերժ: Երկնային Հայրը սիրում է մեզ: Նա ուզում է, որ մենք վերադառնանք Իր մոտ: Իր Քավության զորությամբ Փրկիչը հնարավոր է դարձնում փոփոխությունը, որը մենք պիտի կատարենք մեր սրտերում, որպեսզի մտնենք սուրբ տաճարները, կապենք ուխտեր, որոնք այնուհետև կարող ենք պահել, և ժամանակին հավերժ ապրենք ընտանիքներով սելեստիալ փառքի մեջ՝ կրկին լինելով տանը:

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Երբ դուք կիսվեք հավերժական ընտանիքների վարդապետությամբ, խորհեք այն մասին, թե ինչ է ասել Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթն այս իր խոսքերում. «Միշտ ձգտեք ամրացնել ընտանիքները: Ուսուցանեք՝ ունենալով ընտանիքները տաճարում կնքելու կարևորության տեսլականը: . . . Երբ դուք ունենաք տաճարային կնքման արարողության մտապատկերը, դուք կօգնեք կառուցել Աստծո արքայությունը երկրի վրա» («Ես ձեզ օրինակ տուի», Լիահոնա, մայիս 2014, 32): Ինչպե՞ս դուք կարող եք օգնել նրանց, ում ուսուցանում եք, զարգացնել տաճարում կնքվելու կարևորության տեսլականը: Հրավիրեք նրանց, ովքեր դեռևս չեն կնքվել, քննարկել քայլերը, որոնք նրանք կարող են կատարել դեպի այդ արարողությունը: Հրավիրեք նրանց, ովքեր կնքվել են, քննարկել, թե ինչպես նրանք կարող են պահել իրենց հավերժական ընտանիքի մտապատկերը և աշխատել լավացնել իրենց հարաբերությունները միմյանց հետ:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Հավերժորեն կապված իմ ընտանիքի հետ

Լորա Բըրթն

Երբ երեք տարեկանում ինձ որդեգրում էին, ինձ ծնունդ տվող մայրը թույլ տվեց, որ որդեգրման գործընթացը հասնի իր ավարտին, եթե իմ ծնողները համաձայնեին, որ 12 տարեկանս լրանալուց հետո անցկացվեին եկեղեցական իմ արարողությունները: Նա կարծում էր, որ ես պետք է բավականաչափ մեծ լինեի ինքնուրույն ընտրություն կատարելու համար, սակայն շատ դժվար էր սպասելը:

Այո, դժվար էր տեսնելը, թե ինչպես էին իմ ընկերներից շատերը մկրտվում, երբ նրանք դառնում էին

ութ տարեկան, սակայն ավելի դժվար էր իմանալը, որ ես չէի կարող կնքվել ինձ որդեգրած ծնողների և ինձանից մեծ հինգ քույրերիս ու եղբայրներիս հետ մինչև 12 տարեկանս լրանալը: Ես վախենում էի, որ ինձ հետ մի բան կպատահեր և ես չէի կարողանա կնքվել նրանց հետ:

Երբ մոտենում էր իմ 12 տարին, մենք սկսեցինք ծրագրեր կազմել իմ մկրտության և իմ ընտանիքի հետ կնքվելու համար: Իմ ծնողներն ինձ թույլ տվեցին ընտրել տաճարը, որում մենք կարող էինք կնքվել: Ես միշտ մտածում էի, որ Սան Դիեգո Կալիֆորնիա Տաճարը ամենագեղեցիկն էր, ուստի իմ ողջ ընտանիքը համաձայնեց կնքվելու համար մեկնել Կալիֆորնիա:

Ես անհամբեր սպասում էի, թե երբ պետք է հավերժական ընտանիք կազմեի իմ ծնողների և քույրերի ու եղբայրների հետ: Իմ կնքման ժամանակ ես այնքան ուժեղ զգացի Հոգին, որ դժվար է բառերով նկարագրել: Այժմ, երբ ես վերջապես կնքվել եմ իմ ընտանիքի հետ, անհանգստության իմ զգացումները փոխարինվել են հանգստությամբ և խաղաղությամբ, քանի որ արդեն գիտեմ, որ ես այժմ հավերժորեն կապված եմ նրանց հետ:

Հեղինակն ապրում է Յուտայում, ԱՄՆ:

ԵՐԵԽԱՆԵՐ

Ձգտում դեպի Տաճար

Նախագահ Այրինգը բացատրում է, որ քահանայության շնորհիվ մենք հնարավորություն ունենք գնալու տաճար և կնքվելու մեր ընտանիքի հետ միասին հավերժորեն: Նկարեք կամ գտեք ձեր սիրած տաճարի նկարը և պահեք այն այնպիսի մի տեղում, որ ամեն օր տեսնեք այն: Կազմեք մի ցանկ, թե ինչպես եք դուք նախապատրաստվելու՝ մի օր տաճար գնալու համար:

© 2015 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/14: Թարգմանության հաստատումը. 6/14: *First Presidency Message, June 2015*-ի թարգմանությունը: Armenian 12586 201

Հիսուս Քրիստոսի աստվածային հատկանիշները. առաքինություն

Հավատք, Ընտանիք, Սփոփանք

Աղոթքով ուսումնասիրեք այս նյութը և փորձեք հասկանալ, թե ինչով պետք է կիսվեք: Քրկչի աստվածային հատկանիշները հասկանալը ինչպե՞ս կմեծացնեն ձեր հավատքը Նրա հանդեպ և կօրհնեն նրանց, ում դուք այցելում և ուսուցանում եք: Լրացուցիչ տեղեկության համար այցելեք reliefsociety.lds.org:

Սա Այցելող Ուսուցիչների Ուղերձների այն շարքից է, որը նվիրված է Քրկչի հատկանիշներին:

«Թոռ առաքինությունը զարդարի քո մտքերն անդադար. այն ժամանակ քո վստահությունը կամրանա Աստծո ներկայության մեջ. և քահանայության վարդապետությունը կիջնի քո հոգու վրա, ինչպես ցողը երկնքից» (ՎԵՈՒ 121.45):

Ի՞նչ է առաքինությունը: Երեց Ջեյմս Ի. Ֆաուստն (1920-2007) ասել է. «Առաքինության բուն իմաստը ներառում է արդարության բոլոր հատկությունները, որոնք օգնում են մեզ ձևավորել մեր բնավորությունը»:[1] Նախագահ Գորդոն Բ. Հինքլին (1910-2008) ավելացրել է. «Աստծո սերն ամեն առաքինության, ամեն բարության, ամեն ուժեղ բնավորության հիմքն է»:[2]

Կանանց և առաքինության փոխհարաբերությունների մասին Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնն ասել է. «Կանայք իրենց հետ աշխարհ են բերում որոշակի առաքինություն՝ մի աստվածային պարգև, որը նրանց գիտակ է դարձնում ներշնչել այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ հավատքը, քաջությունը, փոխըմբռնումը և փոխհարաբերությունների և մշակույթների հոկումը: . . .

Քույրեր, ձեր բոլոր փոխհարաբերություններից, Աստծո՝ մեր Երկնային Հոր հետ ձեր փոխհարաբերությունն է ձեր բարոյական ուժի աղբյուրը, որը դուք պետք է միշտ առաջինը դնեք ձեր կյանքում: Հիշեք, որ Հիսուսի ուժը եկավ Հոր կամքին Նրա ողջ մտքով նվիրվածությունից: . . . Զգտեք լինել Հոր և Որդու այդպիսի աշակերտ, և ձեր ազդեցությունը երբեք չի թուլանա»:[3]

Լրացուցիչ սուրբ գրություններ

Սաղմոս ԻԴ.3–5, Փիլիպպեցիս Դ.8, Բ Պետրոս Ա.3–5, Ալմա 31.5, ՎԵՈՒ 38.23–24

Սուրբ գրություններից

Այսօր հավատքով լի առաքինի կանայք օգնության են հասնում Քրկչին: Ղուկաս Ը գլխում մենք կարդում ենք մի կնոջ մասին, ով 12 տարի արյունահոսության խնդիր ուներ, որը չէր բուժվում: Նա բժշկություն էր փնտրում, երբ Քրիստոսին «մօտ եկաւ ետեւիցը, նորա հանդերձի ծայրին դպաւ. եւ իսկոյն նորա արիւնի վազելը կանգնեց: Եւ Յիսուսը ասեց, . . . Մեկը դպաւ ինձ. որովհետեւ ես իմացայ՝ որ զօրութիւն[4] դուրս եկաւ ինձանից»: Այս առաքինի հավատարիմ կինը նրա առաջին ընկավ, հայտարարելով Նրան «բոլոր ժողովրդի առաջին», որ «նորան դպաւ» և «իսկոյն բժշկուեցաւ: Նա էլ ասեց նորան. Քաջացիր, դուստր, քո հաւատքը բժշկեց քեզ» (տես Ղուկաս Ը.43–48, տես նաև Զ.17-19):

Իր զորությամբ[5] Քրիստոսը կարող է բուժել, հնարավորություն տալ, ամրացնել, մխիթարել և քաջություն ներշնչել, երբ մենք ընտրում ենք քաջաբար և հավատքով օգնության հասնել Նրան:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. James E. Faust, “The Virtues of Righteous Daughters of God,” *Liahona,* May 2003, 108.
2. Gordon B. Hinckley, “Excerpts from Recent Addresses of President Gordon B. Hinckley,” *Ensign,* Apr. 1996, 73.
3. Դ. Թոդ Քրիստոֆերսոն, «Կանանց բարոյական ուժը» *Լիահոնա,* նոյ. 2013, 29, 31:
4. Առաքինությունը զորություն ունի (տես Մարկոս Ե.30):
5. Սուրգ Գրքերի Ուղեցույցում «Քահանայությունը» սահմանված է որպես «Իշխանություն և զորություն, որն Աստված տալիս է մարդուն՝ կատարելու այն ամենը, ինչ անհրաժեշտ է մարդկանց փրկության համար» (ՎԵՈՒ 50.26–27):

Խորհեք այս մասին

Ինչպե՞ս է առաքինությունը զորացնում և ամրացնում մեզ:

© 2015 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/14: Թարգմանության հաստատումը. 6/14: *Visiting Teaching Message, June 2015*-ի թարգմանությունը: Armenian 12586 201